`

Հավելված
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2023 թվականի ապրիլի 4-ի թիվ N 118-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2023 թվականի ապրիլի 11-ից

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք՝ www.idbank.am հասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Հեռախոսազանգերի կենտրոն՝ 010 59 33 33, 060 27 33 33 հեռախոսահամարներով:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐԻ [1]

Բանկային երաշխիքների տրամադրման և սպասարկման պայմաններն ու սակագները		
1.	**«ԱյԴի Բանկ» ՓԲԸ կողմից երաշխիքի տրամադրում**	
1.1.	**Երաշխիքի նպատակ**	Մրցույթի մասնակցության, պայմանագրի կատարման, վճարման, կանխավճարի ապահովման կամ այլ նպատակներով
1.2.	**Հաճախորդ**	ՀՀ ռեզիդենտ/ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ, Անհատ ձեռնարկատեր, ֆիզիկական անձ
1.3.	**Արժույթ**	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի կամ Բանկի համար ընդունելի այլ արժույթ՝ հետևյալ հղումով
1.4.	**Նվազագույն գումար**	Չի սահմանվում
1.5.	**Առավելագույն գումար**	սահմանափակվում է Բանկի ներքին իրավական ակտերով
1.6.	**Երաշխիքի առավելագույն ժամկետ**	12 ամիս՝ մրցույթի մասնակցության երաշխիքների համար
		36 ամիս[2]՝ այլ երաշխիքների համար

[1] Սույն սակագները տարածվում են նաև Պահուստային ակրեդիտիվների (Standby LC) թողարկման գործարքների վրա

[2] Տրամադրվող երաշխիքի ժամկետը պայմանավորված է գործարքի ժամկետով և հաճախորդի վարկունակությամբ Բանկի համապատասխան իրավասու մարմնի որոշմամբ կարող է գերազանցել 36 ամիսը

`

1.7.	**Միջնորդավճարներ** [3] [4] [5] [6] [7]		Բանկում ներդրված դրամական միջոցների/դրամական միջոցների նկատմամբ պահանջի իրավունքի, Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի գրավադրմամբ	Այլ միջոցների գրավադրմամբ
	Մրցույթի մասնակցության երաշխիք		Սկսած 0.5% միանվագ, նվազագույնը 50,000 ՀՀ դրամ	Սկսած 1% միանվագ, նվազագույնը 75,000 ՀՀ դրամ
	Այլ տեսակի երաշխիքներ	**մինչև 12 ամիս ժամկետով**	Սկսած 0.5% միանվագ, նվազագույնը 50,000 ՀՀ դրամ	Սկսած 1.5% միանվագ, նվազագույնը 75,000 ՀՀ դրամ
		12 ամսից ավել ժամկետով	Սկսած 1% տարեկան, նվազագույնը 50,000 ՀՀ դրամ տարեկան	Սկսած 2% տարեկան, նվազագույնը 75,000 ՀՀ դրամ տարեկան
1.8.	**Երաշխիքի հաստատում/տրամադրում միջնորդ բանկի կողմից**		Պայմանագրային	
1.9.	**Երաշխիքի պայմանների փոփոխություն կամ երաշխիքի դադարեցում (հետ կանչում)**		25,000 ՀՀ դրամ Գումարի ավելացման կամ գործողության ժամկետի երկարաձգման դեպքում ավելացված մասով կգանձվի նաև համապատասխան երաշխիքի տրամադրման համար նախատեսված միջնորդավճարը	
1.10.	**Վճարում երաշխիքով պահանջի դիմաց**		0.15% նվազագույնը 50,000 ՀՀ դրամ	
1.11.	**Երաշխիքի գումար/գրավ (գրավի գնահատված իրացվելի արժեք) հարաբերակցություն**		Բանկի իրավասու մարմնի որոշմամբ՝ առավելագույնը՝ 50-100%՝ կախված գրավի տեսակից (գույքային գրավով ապահովված երաշխիքների դեպքում): Բանկի իրավասու մարմնի որոշմամբ երաշխիքը կարող է տրամադրվել նաև առանց գույքային գրավի ապահովման կամ միաժամանակ՝ գույքային գրավի և այլ ապահովմամբ (երաշխավորություն, ֆինանսական հոսքեր, գույքային իրավունք և այլն):	
1.12.	**Երաշխիքի հայտի ուսումնասիրության վճար**		Չի սահմանվում	
1.13.	**Բանկային հաշվի բացում/սպասարկում**		Համաձայն Բանկում գործող սակագների, որոնք ներկայացված են հետևյալ հղումով՝ Սակագների տեղեկատվական ամփոփագիր	
1.14.	**Վարկային պատմության նկատմամբ պահանջ (այդ թվում երաշխավորի)**		Բանկի կողմից ընդունելի վարկային պատմություն, ընդ որում Բանկի իրավասու մարմնի որոշմամբ կարող է պահանջվել Հաճախորդի հետ փոխկապակցված անձանց վարկային պատմության նկատմամբ պահանջներ:	
1.15.	**Երաշխիքի ձև**		Երաշխիքը տրամադրվում է Բանկի ստանդարտ տեքստով կամ Բենեֆիցիարի կողմից առաջարկվող ձևով՝ Բանկի համար ընդունելի լինելու դեպքում	
1.16.	**Հայտի ընդունման վայր**		Բանկի մասնաճյուղեր, Գլխամասային գրասենյակ, ինտերնետային կայք (հայտի ընդունման մասով)	

[3] Երաշխիքի վաղաժամկետ դադարեցման դեպքում գանձված միջնորդավճարը վերադարձման ենթակա չէ:

[4] Երրորդ բանկերի միջնորդավճարները, փոստային և կապի ծախսերը գանձվում են լրացուցիչ՝ ըստ դրանց փաստացի մեծության:

[5] Միանվագ միջնորդավճարը գանձվում է երաշխիքի տրամադրման պահին՝ երաշխիքի գործողության ողջ ժամկետի համար:

[6] Տարեկան տոկոսադրույքով արտահայտված միջնորդավճարը կարող է գանձվել՝

- երաշխիքի տրամադրման պահին՝ երաշխիքի գործողության ողջ ժամկետի համար միանվագ,
- առաջին տարվա համար երաշխիքի տրամադրման պահին միանվագ, այնուհետև՝ յուրաքանչյուր տարվա համար՝ միանվագ, յուրաքանչյուր ամիս՝ հաշվեգրված տոկոսագումարների չափով:

[7] Նվազագույն տարեկան միջնորդավճարը գանձվում է երաշխիքի տրամադրման պահին՝ երաշխիքի գործողության յուրաքանչյուր տարվա համար միանվագ: Պայմանագրով կարող է սահմանվել միջնորդավճարի հաշվարկման և վճարման այլ կարգ, համաձայն երաշխիքի առանձնահատկությունների:

`

1.17.	**Պայմանագրերին ներկայացվող պահանջներ**	Բանկի և հաճախորդի միջև բանկային երաշխիքի տրամադրելու մասին պայմանագրերը կնքվում են Բանկի կողմից հաստատված ստանդարտ ձևերին համապատասխան
1.18.	**Ապահովվածության ընդունելի միջոցներ/գրավ**	•Անշարժ գույք, •Հիմնական միջոցներ / սարքավորումներ, տեխնիկա, այլ գույք/, •Տրանսպորտային միջոցներ, •Շրջանառության մեջ գտնվող ապրանքներ, •Դեբիտորական պարտքի իրավունք, •Ֆինանսական հոսքեր, •Երաշխիքներ, երաշխավորություններ, •Դրամական միջոցներ, •Թանկարժեք մետաղներ (իրեր)[8], •Բաժնեմասեր, •Արժեթղթեր, •Իրավունքի գրավ • ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գույք կամ գույքային իրավունք
1.19.	**Գրավի առարկայի ապահովագրություն**	Բանկի իրավասու մարմնի որոշմամբ կարող է պահանջվել գրավի առարկայի ապահովագրություն՝ երաշխիքի մնացորդից կամ գույքի գնահատված շուկայական/իրացվելի արժեքից:
1.20.	**Որոշման կայացման առավելագույն ժամկետ**	1. Բանկում ներդրված դրամական միջոցների/դրամական միջոցների նկատմամբ պահանջի իրավունքի, Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի գրավադրմամբ ապահովված երաշխիքների դեպքում Բանկի կողմից պահանջվող ամբողջական փաստաթղթերի փաթեթը ներկայացնելու օրվանից 1 աշխատանքային օրվա ընթացքում: 2. Այլ ապահովվածության դեպքում՝ Բանկի կողմից պահանջվող ամբողջական փաստաթղթերի փաթեթը ներկայացնելու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում:
1.21.	**Որոշման վավերականության ժամկետ**	ՀՀ տարածքում տրամադրվող երաշխիքների դեպքում՝ 30 աշխատանքային օր ՀՀ տարածքից դուրս տրամադրվող (Միջազգային երաշխիքներ) դեպքում՝ 45 աշխատանքային օր Բանկը իրավասու է հրաժարվել երաշխիքը տրամադրելուց, եթե փոփոխվել են երաշխիքի տրամադրման վերաբերյալ դրական որոշման կայացման համար էական համարվող պայմանները (օրինակ՝ գրավի արժեքի փոփոխություն, կետանցված պարտավորություններ, բանկային հաշիվների կալանք/արգելանք և այլն)
1.22.	**Որոշման վերահաստատման ժամկետ**	Որոշման վավերականության ժամկետը լրանալուց հետո՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում՝ վերահաստատման օրվա դրությամբ գործող պայմաններով
1.23.	**Երաշխիքը տրամադրելու ժամկետ**	1. Բանկում ներդրված դրամական միջոցների/դրամական միջոցների նկատմամբ պահանջի իրավունքի, Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի գրավով ապահովված երաշխիքների դեպքում՝ երաշխիքի տրամադրման որոշումը կայացնելուց հետո և անհրաժեշտ փաստաթղթերն ամբողջական ներկայացնելու օրվանից առավելագույնը 3 աշխատանքային օրվա* ընթացքում, 2. Այլ ապահովվածության դեպքում՝ երաշխիքի տրամադրման որոշումը կայացնելուց հետո անհրաժեշտ փաստաթղթերն ամբողջական ներկայացնելու և գրավի իրավունքի գրանցումից հետո առավելագույնը 3 աշխատանքային օր*, եթե հաճախորդը երաշխիքը ավելի ուշ ստանալու ցանկություն չի հայտնել՝ պահպանելով 1.22-րդ կետում նշված ժամկետը: ** ՀՀ տարածքից դուրս տրամադրվող երաշխիքների դեպքում վերոնշյալ ժամկետները կարող են չպահպանվել:*

[8] Թանկարժեք մետաղների (իրերի) գնահատումն իրականացվում է համաձայն բանկում գործող սակագների:

`

1.24.	**Երաշխիքի ներքո Բենեֆիցարին վճարված գումարը պայմանագրով սահմանված ժամկետում չմարելու դեպքում**	Վճարման ենթակա գումարը վերադարձնելու ժամկետը խախտելու (կետանցի) դեպքում Հաճախորդը/Պրինցիպալը Բանկին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր կետանցի օրվա համար՝ ժամկետանց գումարի 0.1%-ի չափով:
2	**Այլ բանկերի կողմից Հաճախորդի օգտին տրամադրված երաշխիքների սպասարկում**	
2.1	**Երաշխիքի և յուրաքանչյուր փոփոխության ծանուցում**	25,000 ՀՀ դրամ
2.2	**Այլ բանկի կոնտր-երաշխիքի դիմաց երաշխիքի տրամադրում**	Պայմանագրային
2.3	**Երաշխիքի ներքո պահանջի կազմում**	50,000 ՀՀ դրամ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գրավի պայմանագրերը ենթակա են նոտարական վավերացման՝ համաձայն ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջների, իսկ գույքի նկատմամբ գրավի /հիփոթեքի/ իրավունքը ենթակա է պետական գրանցման:
2. Գրավադրվող գույքի գնահատման, ապահովագրության, նոտարական վավերացման, պետական գրանցման և գրավադրման հետ կապված այլ ծախսերը կրում է Հաճախորդը:
3. Տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Տոկոսագումարը հաշվարկվում է երաշխիքի փաստացի մնացորդի նկատմամբ:
4. Արտարժույթով թողարկված երաշխիքների դեպքում մայր գումարի նկատմամբ հաշվարկվող տոկոսագումարները հաճախորդի ցանկությամբ կարող են վճարվել նաև երաշխիքի արժույթով:
5. Արտարժույթով տրամադրվող երաշխիքների դեպքում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ մարումների վրա:
6. Սահմանված մարումները/պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում գրավադրված գույքը և/կամ դրամական միջոցները կարող են օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, իսկ հաճախորդի մասին տեղեկատվությունը Բանկը առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է վարկային բյուրո, որտեղ ձևավորվում է հաճախորդի վարկային պատմությունը: Հաճախորդն իրավունք ունի վարկային բյուրոյից տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել իր վարկային պատմությունը:
7. Վատ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել հաճախորդին՝ ապագայում վարկ ստանալու համար:
8. Հաճախորդի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում գրավի հաշվին պարտավորությունները մարելիս գրավը բավարար չլինելու դեպքում հնարավոր է պարտավորությունների մարում հաճախորդի այլ գույքի հաշվին:
9. Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում մարումներն իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝ գումարի բռնագանձման ուղղված ծախսեր, այդ թվում դատական ծախսեր (առկայության դեպքում), տոկոսների տուժանք, վարկի մայր գումարի տուժանք, տոկոսներ, սպասարկման վճար և միջնորդավճարներ /առկայության դեպքում/ և վարկի գումար: Բանկն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանիորեն փոփոխելու սույն կետում նշված մարումների հերթականությունը:
10. Բանկի և ՀՀ օրենսդրության համաձայն միկրո ձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող հաճախորդի միջև ծագած վեճերը կարող են լուծվել դատական կարգով կամ ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով («Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով), հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ, էլ. փոստ՝ info@fsm.am, հեռախոս՝ (+37460) 70-11-11, ֆաքս՝ (+37410) 58-24-21: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:
11. Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:
12. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն բանկը հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել:
13. Հաճախորդը իրավունք ունի Բանկի հետ հաղորդակցվել իր նախընտրած տարբերակով՝ էլ. Փոստ կամ փոստային կապ: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

`

14. Պայմանագրի գործողության ընթացքում քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների տրամադրման պայմաններին կարող եք տեղեկանալ հետևյալ հղումով՝ Սակագների տեղեկատվական ամփոփագիր: 15. Բանկի մասնաճյուղերի և բանկոմատների ցանկին, վերջիններիս գործունեության հասցեներին և աշխատանքային ժամերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ Մասնաճյուղեր և բանկոմատներ: 16. Բանկի կողմից հեռահար սպասարկումն իրականացվում է IDBusiness համակարգի միջոցով, որի սպասարկման պայմաններին և սակագներին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ «Սակագների տեղեկատվական ամփոփագիր»
Պահանջվող փաստաթղթերի ցանկ
Գույքի գնահատում իրականացնող ընկերությունների ցանկ
Ապահովագրական ընկերությունների ցանկ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ